Հայացք կուտակային կենսաթոշակային համակարգի հետագա կայացմանը. «կառուցենք ու պաշտպանենք»

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Կուտակվող կենսաթոշակային միջոցները փոքր երկրի համար կարող են հսկայական թվալ: Փոքր երկրների կյանքում ֆինանսատնտեսական ճգնաժամերը պարբերական իրողություններ են: Դրանց հետ պարբերաբար «կռվի բռնվող» օրվա իշխանությունները միշտ էլ կարող են ունենալ գայթակղություն՝ քանդելու տարիներով ստեղծածը՝ տվյալ պահի հրդեհը մարելու մտայնությամբ: Հասկանալի մտայնություն է սա՝ շատ նման ամեն ցուրտ ձմռանը տաքանալու համար բակի արագ աճող խնձորենին կտրելու մտքին: Իսկ իրականում կուտակվող կենսաթոշակային միջոցները կատակլիզմների հետ կռիվ տվող իշխանությունների բարեկամն ու սատարողն են և, բնականոն աճի հունի մեջ, ամեն հաջորդ կատակլիզմի ժամանակ ավելի առնական ձեռք կարող են մեկնել: Միայն թե աճի ու բերքատվության տասնամյակների ընթացքում ձմեռը տաս որպե տաքանալու մոլուցքը չհաղթի խուճապի մեջ հայտնված որևէ իշխանության:

Գալիք բոլոր բարեփոխումների հիմնօրինակն ու ոգեշնչողը

Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը վերջին տասնամյակի խոշորագույն ինստիտուցիոնալ բարեփոխումն էր Հայաստանում: Այն շարունակում է կայանալ հետևողականորեն, մեծանում ու ամրանում է տարեցտարի: Ի թիվս հայտնի արդյունքների՝ այս բարեփոխումը էական ազդեցություն է ունենում նաև մասնավոր հատվածի թափանցիկության բարձրացման, ինչպես նաև տնտեսության մեջ ոչ ֆորմալից ֆորմալ աշխատատեղերի անցման նպատակի արագ իրականացման հարցերում: Նոր համակարգի մասին հասարակության շրջանում առկա բազմաթիվ միֆերն էլ այսօր արդեն նվազագույնի են հասցվել կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների թափանցիկ աշխատանքի և կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցներին կենսաթոշակային հաշվի եռամյակային և տարեկան հաշվետվություններ տրամադրելու շնորհիվ:

2014թ. ներդնելուց ի վեր՝ կուտակային կենսաթոշակային համակարգի կայացման ճանապարհին մի շարք մարտահրավերներ են առաջ եկել: Նախ. 2014 սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կենսաթոշակային ֆոնդերից մեկի հաշիվը բացասական էր, ինչը հնարավոր եղավ կարգավորել սեղմ ժամկետներում: Այնուհետև, անհրաժեշտ էր ցույց տալ կուտակային կենսաթոշակային համակարգի դրական կատարողականը համակարգի կայացման ամենաբարդ ժամանակահատվածում՝ առաջին հինգ տարում: Հիմնականում այդ ժամանակահատվածում է համակարգը հանդիպում հասարակական ընդգծված դիմադրության՝ կատարողականի վերաբերյալ թերահավատության, ինչի վկայությունն են հասարակության շրջանում հաճախ հանդիպող թեզերը՝ «ինչո՞ւ եմ կուտակում գումար անհայտ ֆոնդերում, եթե կարող եմ անշարժ գույք գնել կամ ավանդային հաշիվ բացել բանկում և յուրաքանչյուր ամիս գումար ստանալ»: Հայաստանում հենց նույն ժամանակահատվածում նկատվեց անշարժ գույքի շուկայի և փոխարժեքի անկում, մինչդեռ ֆոնդերի արժեքի անկում չգրանցվեց: Խնդրահարույց էր նաև 2018թ. հուլիսին համակարգին միացած անձանց կենսաթոշակային հաշվի տարեվերջյան բացասական հաշվեկշիռը, ինչը հետևանք էր նույն թվականի միջազգային կապիտալի շուկայի անկման, որը, սակայն, չէր ազդել ավելի վաղ համակարգի մասնակից դարձած քաղաքացիներ հաշիվների վրա: Այս խնդիրը կարգավորվեց 2019թ. փետրվար-մարտ ամիսներին, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է, որ շուկաների տատանողականությունից պետք չէ վախենալ:

Այսօր էլ կորոնաճգնաժամի պայմաններում նման երևույթներ կարձանագրվեն. կարձանագրվեն, ու հետո էլի կհաղթահարվեն: Որովհետև համակարգի առջև դրված նպատակները ոչ թե այսպահային, այլ տասնամյակների կտրվածքով են, և պրոֆեսիոնալ կառավարիչների հմտությունը բավարար գործոն է՝ անգամ ալեկոծվող միջավայրում ապահովելու կենսաթոշակային նավի հեռահար ընթացքը:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Անվտանգության նոր բարձիկներ կենսաթոշակային համակարգի համար

Կենսաթոշակային համակարգի կայացմանը և ֆոնդերում կուտակվող գումարի աճին զուգահեռ առանձնահատուկ ուշադրության են արժանի կենսաթոշակային ֆոնդերի անվտանգության և անձեռնմխելիության ապահովման հարցերը: Այս նպատակով, անհրաժեշտ են անվտանգության իրավական և ընթացակարգային նոր երաշխիքներ քաղաքացիների սեփականության իրավունքը հնարավոր քաղաքական հավակնություններից ապագայում պաշտպանելու համար: Այս առումով, օգտակար կարող են լինել ինչպես սահմանադրությամբ համապատասխան նոր երաշխիքների ամրագրումը, այնպես էլ վերազգային ընկերությունների հեղինակությամբ պայմանավորված նոր պատվարների ստեղծումը:

Խիստ կարևոր է նաև փոխել կուտակային կենսաթոշակային համակարգի նկատմամբ հանրության ու գալիք բոլոր իշխանությունների ընկալումներն ու վերաբերմունքը: Կատարված սոցիալական վճարները պետք է դիտվեն ոչ թե որպես անձնական եկամտից գանձվող հարկ, այլ երկարաժամկետ շահավետ ներդրում, և այս ուղղությամբ անհրաժեշտ է մշակել և հանրայնացնել արդյունավետ, հասցեական և մատչելի ուղերձներ: Այս առումով, կենսաթոշակային ֆոնդերի կուտակված գումարը նշանակալի արդյունավետությամբ կարող է ուղղվել տեղական նշանակության ոչ ռիսկային և երկարաժամկետ նախագծերի ֆինանսավորմանը: Վերջինս թույլ կտա նվազեցնել կախվածությունը թվացյալ ցածր տոկոսադրույքներով տրամադրվող միջազգային վարկերից՝ դրանով իսկ նպաստելով երկրի արտաքին պարտքի կրճատմանը: Միաժամանակ, նման ներդրումը կարող է արդյունավետ բիզնես գործարք հանդիսանալ կենսաթոշակային կուտակային համակարգի մասնակիցների համար և նշանակալիորեն ընդլայնել նրանց եկամուտները: Օգտակար կարող է լինել միջազգային վարկային և ներդրումային կազմակերպությունների հետ համագործակցության շարունակումը գիտելիքի և փորձի փոխանակման տեսանկյունից: Շատերը դեռևս թյուր կարծիք ունեն և ընկալում են կենսաթոշակային հիմնադրամները որպես հերթական բանկ, որը չգիտես ինչու մատչելի միջոցներ պետք է տրամադրի բիզնես հանրությանը: Կենսաթոշակային հիմնադրամների միջոցներն իրականում մեր երկրի ամենաերկար և ռազմավարական միջոցներն են, մեր ապագա անտառի ծիլերը:

Հասարակական և քաղաքական շրջանակների կողմից վերջին տարիներին քննարկվել է նաև կենսաթոշակային համակարգի մասնակիցների՝ որոշ դեպքերում մինչև կենսաթոշակի տարիքը լրանալը կուտակված գումարը ստանալու հնարավորությունը: Այս թեմայի առնչությամբ մասնագիտական տարբեր քննարկումներ են կազմակերպվել, որոնք ցույց են տվել նման մեխանիզմի հնարավոր բացասական հետևանքները ողջ համակարգի անվտանգության տեսանկյունից:

Շարունակելով անտառի անալոգիան՝ եթե նույնիսկ մի քանի ծիլ ծառ են դարձել, դրանք վաղորոք կտրելը ի չիք է դարձնում անտառ դառնալու հեռանկարը: Մենք դեռևս չունենք այն ծավալի կուտակված կենսաթոշակային միջոցներ, չունենք այն անտառը, որի բարիքներից կարող ենք օգտվել: Հանրային գիտակցության մեջ շարունակաբար անհրաժեշտ է ամրագրել, որ կենսաթոշակային միջոցները մեր ապագան են, և այդ ծառը ժամանակից շուտ կտրել չի կարելի: Այս ուղերձը դեռ 20 տարի անընդմեջ պետք է կրկնվի, մինչև մարդիկ զանգվածաբար կսկսեն քաղել համակարգի պտուղները և կդադարեն դառնալ հաջորդ սերունդների ամենածանր բեռը:

Համառոտագիրը մշակվել է 06.03.2020թ. կայացած « Կուտակային կենսաթոշակային համակարգի ներկա իրավիճակը » խորագրով կլոր-սեղան քննարկման արդյունքում «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական հատվածի արդյունավետ հաղորդակցության ուղիների կարգացմանն ուղղված» ծրագրի փորձագիտական խմբի կողմից: Ծրագիրն իրականացնում է «ԱյՍիԷյՀի. Մարդկային կարգացման միջազգային կենտրոն»-ը՝ «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ: